

“ԵՍ ԵՍ ԼԱՑՆ ԿԵՆԱՑ”

(Յուղի. Զ. 35)

Հասկերն առոք կարմիր են,
Յորենի գաշտն է ծըփուն.
Հովեր կ'անցնին ու կ'երգեն
Ալէլուիա, օրհնութիւն:

Ու կը կըրկնեն մեղմաձայն
Հասկերն այդ երգն անքընին.
«Ես եմ երկնից մանանան
Ամենասուրբ Սեղանին»:

Այսպէս անոյշ երազով
Նըշխար ըլլալ կը ցանկան,
Ու կը սպասեն ամանով
Արեւապաշտ ամառուան:

Գալով երեմն իրարու
Խաչ կը զըծեն լայնանիստ,
Թաքուն խօսքի մը հըլու
Կ'իջնէ Յիսուս քիստ առ քիստ:

«Ես եմ մարմին, ես եմ հաց,
Ո՞վ դուք նըքթեալ հէք մարդեր»,
Եւ անոր հետ աչեր թաց
Կը հետեւին աղօթկեր:

Այլէլս նա ոգի չէ
Թէպէտ ճէրմակ քղամիդով,
Հազար դարեր միշտ նոյնն է,
Նոյնը խորունկ վէրքերով:

Ու դարերով նոյն ցորենն
Կ'ելլէ ծովի պէս ծըփուն,
Հովեր կ'անցնին ու կ'երգեն
Ալէլուիա, օրհնութիւն:

Կ'անցնի ինչպէս երբեմնի
Հասունացած արտերէն,
Իր քըղանցքին կը հըպի
Թղշուառութիւնն համօրէն:

«Ես եմ մարմին, հաց կենաց,
Շօշափեցէք և տեսէք.
Զեր մատներով թանձրամած
Զիս ամէն օր պիտ' ուտէք»:

Աշխարհն «Ամէն» կը կըրկնէ
Պատարագի երգերով.
Երկինք երկիր խորան է,
Արտերն անոյշ խունկի ծով:

«Ոսէք կերայք, այս է հաց
Զոր երկընքին ձեզ բերի».
Եւ ինքն Յիսուս խաչարաբ
Շրոթներու մէջ կը հաւի:

Զանգերն հեռուն՝ կը հընչեն
Արտերուն հետ միաձայն.
Գաշտերու մէջ հոգեղէն
Լոյս կը սփոխ անսահման:

Դարձեալ Յիսուս հեզագնաց
Այերեւոյթ կը շըրջի.
«Ես եմ մարմին, ես եմ հաց
Նորոգ կենաց աշխարհի»:

20 Հոկտեմբեր 1933
Փարիզ

Հ. Վ. Ա. Յովանական

ՈՐԻՄԱՀԱՅ ԹԱՏՐՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿՃԲԻՑ ՄԻՒՉԵԿ 70 - ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Եար. տես Բազմավէպ 1934, էջ 81)

40-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆ

“ Խ Ծ Լ Ք Ի Ց Պ Ա Տ Տ Ո Ւ Հ Ա Յ ”
Հեղ. ԳՐԻԲՈԵԴՈՎԻ

Ուշաական բատրուի ծագումը : 19-րդ դարի քառասունական թւականների թուղարական թատրոնի պատմութեան հիմնական մօմէնտներն արձանագրող պատմաբանը , անկասկած պիտի կանգ առնի նաեւ ոռւսական թատրոնի սկզբնական շրջանի պատմութեան վրայ, որի հետ սերտ կերպով կապւած են թիֆլիսի հայ թատրոնի առաջին շրջանի պատմութեան մի քանի քննորոշ էջերը :

Ուսւահայ թատրոնի պատմութեան մէջ ուշագրաւ է հէնց այն հանգամանքը, որ 30-ական թւականների վերջերին և 40-ական թւականների սկզբին թիֆլիսում հրապարակ է գալս սուս թատրոնի ներկայական մի իրադարձութեամբ : Սակայն շուտով խափանւում են ներկայացումները և Գրիբօեդովի այնպէս էլ մեռնում է անմիտիթար , չկարողանալով ոչ ներկայացնել իր պիէսը և ոչ էլ տպել տալ : Միայն 1843 թ. առաջին անգամ լոյս է տեսնում ձեռագիրը , սակայն զըրաբննիչ Յվէտանի խիստ գրաքննութեամբ փոփոխւած ու աղաւաղւած :

Նոր շրջան : 1845 թւին ուսւական թատրոնի համար բացում է մի նոր շրջան , երբ կովկասի փոխարքայ է նշանակում Միհայիլ Ամենովիչ Վորոնցովը : Ուսւ

— «Խելքից պատուհաս» կատակերգութեան պատմութեանը ծանօթ մարգանց յայտնի է , որ , այն ժամանակները , երբ կովկասում փոխարքայութիւն էին անում Ռոգէնը , գաւութիւնը ու Նէլդհարգը , Գրիբօեդովի կոմէտիան խաղում էին սիրողները , բարեգործական նպատակով , նոյնիսկ հեղինակի ներկայութեամբ : Բայց ոչ ամէնքը կարող են յիշել , որ այդ ներկայացումներից մէկը կայացաւ Ներսիսեան հայոց հոգեւոր գպրոցի դահլիճում» :

« Խելքից պատուհաս »-ի գաղափարը Գրիբօեդովի յղանում է թաւրիզում 1821 թւին և վերջացնում 1824 թւին Տուլայի նահանգում : Զեռագիրն առաջին անգամ բեմադրում է 1827 թւի թունւարին Երեւանում , Հրազդանի ափին բարձրացող սարգարի պալատի զահլիճում՝ զօրապետ կրասովսկու նախաձեռնութեամբ և ոռւսականների գերակատարութեամբ :

Սակայն շուտով խափանւում են ներկայացումները և Գրիբօեդովի այնպէս էլ մեռնում է անմիտիթար , չկարողանալով ոչ ներկայացնել իր պիէսը և ոչ էլ տպել տալ : Միայն 1843 թ. առաջին անգամ լոյս է տեսնում ձեռագիրը , սակայն զըրաբննիչ Յվէտանի խիստ գրաքննութեամբ փոփոխւած ու աղաւաղւած :

Նոր շրջան : 1845 թւին ուսւական թատրոնի համար բացում է մի նոր շրջան , երբ կովկասի փոխարքայ է նշանակում Միհայիլ Ամենովիչ Վորոնցովը : Ուսւ

մեծապետական շօվինիզմի ժամանակա-
շրջանն է դա, որի համար Վորոնցովն օգ-
տագործում է մամուլն ու թատրոնը։ Թիվ-
լիսում նա հիմնում է «Կովկաս» թերթը
և միաժամանակ թատրոն։

Այս շրջանում թիվլիսում ոռւսական թաւրոնն ապրում է իր կազմակերպչական շրջանը և հետզհետէ անում նոր որոնումներ։ Եւ դա չնորհիւ արւեստի սիրով կը-րակւած բարձր դասակարգին պատկանող մի խումբ երիտասարդների։ Երբ գործ ենք ածում «բարձր դասակարգ» անունը, չը պէտք է մոռանանք, որ դա մի համախըմքում է զլիսաւորապէս վրաց առաջնակարգ թաւաղների և նրանց կանանց ու օրիորդների։ Նրանք հրապարակ են գալիս մի հիմնական լօգունգով։ տարւայ ընթացքում կազմակերպել մի քանի ներկայացում՝ բարեգործական նպատակով։ Գծելով իւրենց ծրագիրը, նրանք անցնում են ակտիւ աշխատանքի։ Հրապարակ են գալիս նախ ընտանեկան բեմերի վրայ Պետրէ Բագրատիոնի տանը (հետագայում Գրիգոր Արծրունու քարւանսարան – Կօմինտէրնի փողոցում), ապա անցնում «Ազնւականների» գիմնազիայի դահլիճը եւ մանէժի (Ճիշճարժարան) սրահը։ Մի քանի ներկայացումներ տրում են նաեւ նախկին Առկսրանսկու փողոցում գտնւած մի դարբասում։

ի՞նչ ոէպէրտուարով են հրավարակ գա-
լիս թատրոնական դրօշակակիրները : - Բնո-
րոշ է , որ նրանք հէնց սկզբից թատրոնը
զնում են զլիսաւորապէս ժամանակակից
կեանքից վերցրած , ժամանակի հասարա-
կութեան կեանքը , բարքերը դրսեւորող
պիէսներ :

Առաջին հիմնական ներկայացումը տալիս են 1845 թ. սեպտեմբերի 20-ին, նախկին փոխարքայի պալատի մօտ, մանէժի սրահում: Բեմազրում են Խվանէ Կերեսելիձէի «Լախարդրած Պրինց» պիէսը: Այնուհետեւ հետզհետէ ներկայացնում են: «Հայր և որդի» (զրամա), «Լիւդմիլա» (մէլօգրամա), «Սարդամի նաւի վարպետը» (կոմէդիա), «Խորհարար սեղանի

տակ՝» (վօղըւիլ), «Մարդկանց մէջ հբեշ-
տակ-կինը, տանը սատանայ» (վօղըւիլ):
Դերասանական խմբի մէջ մտնում են.
Լվօվ - զրամատիկ գերասան, Ամիրնօվ
տաղանդաւոր կօմիկ, Մարկօ - զրամա-
տիկ-կօմիկ, Գրէյսիկ թեազանցօվ - հիւ-
մօրիստ, Պօեաժինկօվսկայա - պառա-
կանանց գերեր կերտող, Պետրովա, Լվօ-
յան եւն:

Նոյնական 1849 թվից հասել է մեզ մի
ափիշ, որը բնորոշ զաղափար է տալիս
նոյն շրջանի արևեստագէտների խմբի մա-
սին, որի մէջ մտնում են՝ իշխան, Գօնդու-
կով-Կորսակով, Գրաֆ. Վորոնցով Դաշ-
տով, իշխան Գոլիցին, իշխան Գագարին,
Լուսուհի Շուտագէլ և այլն : Այս խմբին
հասնակցում է նաև թատրոնական մի հայ
պայ : Գա Լօրիս-Մելիքովն է : Խմբի գոր-
ծունէութիւնը հետզհետէ զրաւում է երի-
տասարդներին եւ Թիֆլիսում սկսում է
թատրոնական եռանդուն մի շարժում :
Խիստ բնորոշ է, որ այս փողըիկ խում-
բը ներկայացումներ է տալիս ոչ միայն
ուստարձներէն, այլ և օտար լեզով : Դեռ 1849
թ. դեկտ. 9-ին խումբը Գրանսերէն լեզով
սեմաղրում է «Etre aimé ou mourir»,
«La fille du bourreau» և ասերէն «Եկոլի
լարժապետը» : Նոյն թւի դեկտ. 21-ին
ներկայացւում է «Առանձին յանձնարա-
ւութիւնների պաշտօնեան» և Գրանսերէն

«La comtesse de Tonneau», իսկ ճեմագիր մի աֆիշից երեսում է, որ խումբը 1850 թվ. Մայիսի 3-ին բեմադրում է շալու. Երիսթովի «մայծք» պիեսը:

Այստեղ պիտի արձանագրել և այն, որ շշտական թատերասրահի պակասութեան զատճառով ներկայացութեարը տրւում են նոդհատութեարով և տարբեր տեղերում, լինարուապէս Շերմագանեանցի դարբաւում և Գիմնազիայի սրահում։ Այս դընութիւնը շարունակում է մինչեւ Թամամալշեանի թատրոնական շէնքի բացումը։

Թաւմանչեանի թատրոնը (1846 – 1873):
Վառասնական թւականների կէսին Թիֆ-
իսի թատրոնական ասպարիգում կատար-

Հումքը և նշանակալից մի նւաճում:

Այդ առիթով, 1846 թ. Օգոստոսի
26-ին, Վորոնցովը գրում է.

— «Պատուաւոր քաղաքացի Գաբրիէլ Թամամիչեանն առաջարկում է Ծիփլիսում, Երեւանէան հրապարակում, պետական հողի վրայ, կառուցել քարաշէն, երկյարկանի մի թարոն, իր կրպակներով, այն պայմանով, որ չէնքի շինութիւնը վերջանալուց յետոյ հողամասն ընդմիշտ գառնայ Թամամիչելի և նրա տոհմի սեփականութիւնը, իսկ հասարակութիւնն իրաւունք ունենայ առանց վարձատրութեան օգտւելու թամրոնի չէնքից» :

Սկսւում են գործնական աշխատանքները:
Խոտալացի ճարտարապետ Ակուտիէլին զը-
ծում է թատըռնի շնչեցի յատակագիծը,
մշակում պլանը: Եւ ահա, 1846 թ. Օ-
գոստոսի 26-ին, Շինարարական կօմիսիան
թամամշեանի հետ կնքում է մի պայմա-
նագիր, որի էսական կէտերն են.

Առաջին : Եխնարարական մասնաժողովը կովկասի փոխարքայի որոշումով՝ թիֆլիսի պատւաւոր քաղաքացի Գաբրիէլ Թամամշեանին տալիս է թիֆլիս քաղաքի, Երևանին հրապարակի վրայ գտնած պետական 855 քառակուսի սաժէն անբնակ հողը, որպէս մշտական տոհմական սեփականութիւն՝ առանց

հարլիք, որպէսզի Թամամշեանն իր սեփական դրամագլխով այդ հողի վրայ, երեք տարւայ ընթացքում, հաշեելով 1846 թւի հոկտեմբերի 28-ից, կառուցէ քարէ երկյարկանի շնչ հասարակական թատրոնի համար իր կրպակներով և նկուղներով... որը կը հաստատի զինանշանակիր թղթի վրայ օրինական մուրճակով, որից յեսոյ կրպակները և նկուղները կը մտնին ընդմիշտ Թամամշեանի և նրա տոհմի լիակատար իրաւասութեան տակ, իսկ թատրոնը նոյնպէս լիովին և ընդմիշտ կը պատկանի Թիֆլիսի հասարակութեանը:

Երկրորդ: Մակարդակի համաձայն շինտած կրպակներն ու նկուղները թամալցեանն իրաւունք ունի վարձով տալու իր սեփական օգտին, միայն պիտի յատկացւին մանուֆակտուրային ապրանքների, արդուզարդային իրերի, քաղցրաւենիների և ընդհանրապէս այնպիսի ապրանքների, որոնց արտաքին տեսքը տպենութիւն չ'ներկայացնի:

Երրորդ: Մակարդակի վրայ ցուցազրւած թատրոնը, բուփէտը և միւս անհրաժեշտ սենեակները, որոնք նշանակւած են մակարդակի և ճակատի վրայ, պէտք է շինուեն Թամամշեանի ծախքով, նոյնպէս և օթեակները, յատակները, և վայելուչ ծեփումը. յատակները, բեմը և դահլիճները պիտի շինուին մեքենագէտի ցուցմունքով... և ընդհանրապէս ազնիւ նիթերից պիտի կառուցւի ամբողջ շնորը, գեղեցիկ և զարդարուն: Գլխաւոր կարնիզը պիտի շինուի յոկւած սալաքարերից. կտուրը ծածկուի երկթէ թիթեղներով. ամառողջ շինութեան ներքին մասը, նոյնիսկ կրպակները, միջանցքները, սանդուխները պիտի շինուին կամարներով, տաշւած քարից:

Կոյսակէս սանդուխի և վերին պատշգամի ճաշ-
գերը պիտի շինուին թղից կամ երկաթից։ Թա-
տրոնի տակը կառուցւի երկու վառարան, իսկ
ամբողջ շինութիւնը հրդեհից պաշտպանելու
համար կտորի տակ պիտի շինուի աւազան,
ուր ջուրը պիտի լցուի ներքին յարկում շին-
ւած մղիչ ջրմուղ մեքենայ խողովակների
միջոցով.. թատրոնի ներքին սարքը, օթեակ-
ները, նկարազարդերը, գէկօրացիաները և
նրանց շրջանակները, կարասիները և այլ
թատրոնական իրեր թատրոնի վարչութեան
պարտականութիւնն են։ Գրսի և ներսի պա-
տերի յատակների, սանդուխների, կտորի
հիմնաւոր նորոգումը, որ չի վերաբերում
զարդարանքի կամ կարասիքի թամամշեանի

պարտականութիւնն է: Բուքէտի արդիւմքից
օգտւելու իրաւունք ունի Թամամշեանը: Բացի
դրանից, Թամամշեանին ձրի է տրւում տոհա-
մական մի օթեակ N. 15 Բէլ-էտաժում:

Զորբորդ: Թատրոնը և նրան պատկանող շէնքերը, որպէս հասարակական շէնքեր, ընդմիշտ ազատութ են որեւէ տուրքից և այլն:

Այս պայմանաթուղթը կնքում է եւ
հաստատում պետական և պաշտօնական
անձերին կազմւած յանձնախումբը, որին
մասնակցում են. քաղաքական նահանգա-
պետ գեն. Մ. Երմոլովը (նախագահ), նա-
հանգական ազնւականութեան պարագլուխ
իշխ. Օրբէլեանին, աշխատանքների վարիչ
ճարտարապետ - գնդապետ Աօնին, Կօլ-Լէ-
ռու, ճարտարապետ Բէլօ, անդամ իվանով,
ճարտարապետ Ակուսիէրի և քաղաքա-
գլուխ Տէր - Գրիկուրով : Պայմանագիրը
վաւերացնում է քարտուղար Տիմչենցօն :
Այնուհետեւ սկսում են թատրոնի շենքի
կառուցման եռուն աշխատանքները :

1847թ. Ապրիլի 15-ը Թիֆլիսի թատրոնի պատմութեան մէջ նշանաւոր մի տարեթիւ է: Այդ օրը Թիֆլիսի գեղարվեստական հասարակութեան տարբեր խաւերը համախմբւում են Երեւանեան հրապարակը: Այստեղ են գալիս նաեւ պետական բարձր իշխանները, պաշտօնեանները, Ներսէս Աշտարակեցին: Բոլորն էլ համախմբւում են թատրոնի հիմքը գնելու գեղեցիկ իդէառով տոգորւած: Հնչում է երաժշտութիւնը և ահա թնդանօթների որոտների ներքոյ զըրւում թատրոնի շէնքի հիմքը: Ուզի՞ չորս ու կէս տարի, ճարտարապետ Սկուտիէրու ղեկավարութեամբ, առաջ են տարւում շէնքի կառուցման աշխատանքները: Շինարարութեան տէմպեկը դանդաղեցնում է հիմքի չափազանց փիլրուն հողը, որի վրայ նախագծւածից աւելի շատ զրամագլուխ է ծախսում: 1850թ. գեկտ. 23-ին վերջանում են աշխատանքները: Եւ ահա Թիֆլիսում կառուցւում է ամենամեծ և գեղեցիկ թատրոննական շէնքը:

Ժամանակի «կաւկազ» լրագրի թ. 16-ում (1847) թատրոնի շենքի կարդում ենք հետեւեալ նկարագրութիւնը:

— «Այս հսկայական և գեղեցիկ շենքի հիմքը
մինչեւ պատուանդանը ներկայացնում է մի
սաժէն հաստութիւն։ Ամբողջ իրանի երկա-
րութիւնը՝ 36 սաժէն և 2 արշին, լայնու-
թիւնը՝ 22 սաժէն 2 արշին, իսկ բարձրութիւնը,
միջին թւով, 6 սաժէնից աւելի։ Թափառնի
միջին տարածութիւնը՝ 17 սաժէն երկարու-
թիւնը, 12 սաժէն լայնութիւնը և 5 սաժէն
բարձրութիւնը։ Տեղաւորում է 180 բազկա-
թու, առաջին յարկում 22 օթեակ, երկրոր-
դում՝ 23 և ամբիթատրոնում, բեմի հանդէպ,
9 օթեակ։ Բացի գրանից, ընդարձակ վեր-
նայարկ 200 մարդու համար, ընդամենը տե-
ղաւորում է 800 մարդ։

Թատրոնի ներքին կահաւորման և զարդարանքների համար կազմում է՝ յատուկ յանձնաժողով, որը հրավիրում է ամենայայտնի և նուրբ գեղարվեստագէտներ, որոնք դահլիճը, ֆօյէն, պատերը և կամարները զարդարում են սբանչելի, նուրբ նկարներով և կաղապարում զաջից ու կաւից շաղախւած պարսկական ամենանուրբ ծաղկեծնեփերով : Առանձին մի վարպետ նկարիչ նկարազարդում է թատրոնի դահլիճը ոսկեզօծ գոյներով և տարբեր երանգներով : Այդ բոլորի համար ծախսում է 3300 ռուբլի : Կարիտորը, միջանցքները ծեփուում են մեղրամումէ մաստակով, իսկ օթեակների պատերը զարդարուում յատկապէս Պարիզից բերւած երկնագոյն թաւիշով : Առանձին վարպետներ նուրբ փորազրութեամբ զարդարուում են ամփիթատրոնի նըստարաններն ու պատշգամները : Դահլիճը լուսաւորում յատկապէս Պարիզից բերւած ջահերով և բազմաճիւղ աշտանակներով . իսկ միջանցքները լուսաւորում՝ Մոսկայից


բերւած ջ հատ առանձնայատուկ լապտեր-
ներով։ Բոլոր բազկաթոռները և աթոռները
պատրաստում են հաճարի բաց գունաւոր
փայտից, դահլիճի ֆոնի համաձայն։ Ներ-
քին ամբողջ կահաւորման և զարդարանքի
համար ծախսում է 25,500 ռուբլի։ Կա-
ռուցում է այնպիսի մի թատրոն, որն
իր ճարտարապետական գեղեցիկ կերտած-
քով, ներքին գեղարւեստական կահաւորու-
թեամբ և զարդարանեցով գերազանցում է

Նոյնիսկ Օդէսայի և Պետրովկադի թատրոնական շենքին:

Թատերասեղօնն առաջին անգամ բացված է 1851 թ. Ապրիլի 12-ին, հինգշաբթի օրը։ Տեղի է ունենում դիմականանդէս՝ յօգուտ Ա. Նինա ոռւս օրիորդաց դպրոցի։ Այդ երեկոյ հասարակութիւնն առաջին անգամ ծանօթանում է նորակառոյց թատրոնի հետ։

թէ հայերն ի՞նչ պիէսներ են բեմադրում
այս թատրոնում և գեղարւեստական տե-

որ 40-ական թւականի վերջերին Թիֆլիս սում, վանքի առաջնորդարանին կից հինգ դահլիճում, մի խումբ սիրողներ հրապարակ են գալիս և բեմադրում պատմական մի պիես - «Հայկ դիցազե» , որի գլխաւոր գերերը կատարում են Աղեքսանդր և Մկրտիչ Տէր-Գրիգորեանները , Յակոբ Կարինեանը և Խաչատրուր Առուանեանը : Այս անունները բնորոշում են թատրոնի պատմական - ազգային ուղղութիւնը : Թէ սիրողների խումբն այնուհետև ի՞նչ գործունէութիւն է ցոյց տալիս , յայտնի չէ : Այս փաստաթթվով էլ փակում ենք քառասունական թւականների Թիֆլիսի հայ թատրոնի պատմութեան էջերը :



թամամշելի թատրոնի Աերքին տեսարանը
(Սյրւած 1873 թ.)

ԹԱՏՐՈՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

1858 թ. - ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
«ՀԱԶԻ ՍՈՒԼՔՅԹՄԱՆ» — Հեղ. Յովհաննէս Գուր-
գելորէցիանի,

սակէտից լնչպիսի՛ նւաճումներ անում,
այդ կը տեսնենք թիֆլիսի հայ թատրոնի
պատմութիւնը գծելիս։ Այժմ ընդգծենք
այն, որ բաներկու տարի շարունակ այս
թատրոնում թեմազրւում են նորանոր պիէս-
ներ։ Քանիներկու տարի շարունակ այս թա-
տրոնը ծառայում է հասարակութեան տար-
բեր խաւերի կուլտուրական գեղարւեստա-
կան դաստիարակութեանը։ Ծառայում է
երեք տարբեր ժողովուրդների՝ ռուսների,
վրացիների և հայերի՝ գեղարւեստին։ Դա
խոշոր և նշանակալից երեւոյթ է թատրոնի
պատմութեան մէջ։

1873 թւականին վերջանում է Թամացիանի թատրոնի պատմութիւնը; Թիֆունացիոնալիզմը և անողոք հրդեհը լափում, ոչնչացնում են թատրոնի գեղեցիկ շենքը;

* *

Այս շրջանից հասել է մեզ մի ափիշէ,
որի ճակատին կարդում ենք 1849 թւա-
կանը։ Այդ փաստաթղթից պարզում է,

իր ենց ինքնուրոյն շարազրութիւնները։
Քննութեան առնում նոր հրատարակւած
գրքերը, հանդէսները, վիճում են հին և
նոր մատենազրութեան մասին։ Վիճաբա-
նութիւնները տեսում են շատ անգամ մինչեւ
գիշերւայ ժամի երկուսը, երեքը։ Այդպիսի
հաւաքական աշխատանքով՝ ուսանողներն
աւելի ընդլայնում են և խորացնում իրենց



Յովհաննէս Գուրգէնքան

մտաւոր հորիզոնը, ընդունում և իւրացնում
նոր գաղափարներ, նոր իդէալներ։

Գաղափարական այդ ուսանողներից շատերը սովորում են նիւթական բաւական քարեկեցիկ պայմաններում։ Բայց կային ազգատ և կարօտ ուսանողներ, որոնք ուսանում էին նիւթական զբկանքների մէջ։ Անգամ նրանցից մի քանիսը չեն կարողանում վճարել իրենց բնակարանի վարձը։ Օգնում են չքաւոր ուսանողներին տեղական հարուստ հայերը, մտածում են նրանց նիւթական զրութիւնը բարելաւելու մասին, տալիս են զբամական որեւէ օգնութիւն, որպէսզի նրանք կարողանան ուսանել գո-

նէ քիչ թէ շատ տաճելի պայմաններում։
Մոսկվայի հարուստ հայերն օգնութեան
չեն հասնում չքաւոր ուսանողներին։ Նը-
րանց անմիջիթար վիճակով մտահոգւում են
միայն համալսարանի հայ ուսանողները։
Նրանք վճռում են օգնել իրենց չունեւոր,
աղքատ ընկերներին։ Բայց ի՞նչ միջոցնե-
րով, ի՞նչպէս կարելի էր զրամ ձեռք բե-
րել։ Անհրաժեշտ էր տեղական հասարա-
կութեան ուշադրութիւնը հրաւիրել, նրանց
համար մի նոր, մինչեւ այդ չեղած մի երե-
ւոյթ ցուցադրել։ Թատրոնն այդպիսի մի
երեւոյթ էր։ Եւ ահա հրապարակի վրայ
է զրւում թատրոնի հարցը։ Նախաձեռնող-
ները հանդիսանում են կայսերական հա-
մալսարանի հայ ուսանողները։ Նրանք մի
զրօշի տակ համախմբելով բոլոր թատերա-
սէր ուսանողներին, կազմում են մի խումբ,
որպէսզի կարճ ժամանակում բեմազրեն մի
պիէս։ Բայց հարց է առաջ գալիս։ Ի՞նչ
ներկայացնել։ Ահա այս շրջանում համա-
լսարանի ուսանողներից Յովհաննէս Գուր-
գէնրէզեանը զրում է «Հաջի Սուլեյման»՝
պիէսը։

ի՞նչ ուղղութիւն ունէը այդ պիեսը, ի՞նչ
հանգամանքների ներքոյ է գրում հիղինակը
և վերջապէս ո՞վ է ինքը, Հաջի Սուլէյ-
մանը :

Մի գործողութիւնից բաղկացած վօղբւլէ
է, «Հաջի Սուլէյման»։ Գուրգէնքեանը
այդ պիեսը գրում է Մոսկւայում իր ու-
սանողութեան շրջանում։ Դա այն ժամա-
նակաշրջանն էր, երբ Մոսկւայի «Փոքր
Թատրոն»—ում բեմադրում էին ռէալիս-
տական մի շարք պիեսներ։ Այդ ժամանակ
Գուրգէնքեան ապրում էր Կայսերական
թատրոնի կառավարիչ՝ Օվերովի մօտ և
նրա ընտանիքի անդամների հետ շարունակ
յաճախում թատրոն։ Այդ ներկայացում-
ները վճռական ազգեցութիւն են անում
և արմատապէս փոխում նրա նոր կազ-
մակերպւող աշխարհայեացը։ Առանձնա-
պէս նա հմայում է հոչակաւոր Սաղով-
սկու, Շումսկու և Ակիմովյաի խաղերով։
Այդ ներկայացումների ուժեղ տպաւորու-
թեան տակ էլ նա գրում է իր վօղբւլը։

Ահա թէ ինքը, գուրզէնբէզեանը, ի՞նչպէս
է բացատրում իր պիհուը զրելու շարժա-
ռիթը։

— « Ուսանող ժամանակս, Մոսկվայում ըլ-
նակւում էի « Փոքր Թատրոնի » կառավարչի
մօտ, հէնց թատրոնում և նրա ընտանիքի նետ
ներկայացումներին անընդհատ յաճախում.
ահա այդ ներկայացումներու տպաւորութեան
տակ փորձեցի պիէսներ գրել » :

Ո՞վ է, սակայն, Հաջի Սուլէյմանը :
«Դա այն հրէայ Պարսկաստանցի դալանեւ-
րի նախատիպն է, որոնք թափառում են
Թիֆլիսի ծուռումուռ փողոցներում և
սաղացնում են իւրեանց փթած ապրանքը
միաժիտ և չքաւոր ժողովրդի վերայ, հա-
ւատալով նորանց նիսիայ (ապառիկ) ...
Պիէսայի հեղինակը ներկայացրել է հրէայ
դալալին իւր տան ծալապատիկ նստած,
փոքրիկ թախտի վրայ հաշուի լոտիկ ձեռին՝
ամփոփուած իւր նիսիաների հաշւատեսու-
թեամբ, որ վերջացնելուց յետոյ համոզվում
է, որ կարողացել է արգէն իւր համար մեծ
հարստութիւն կազմել» («Փորձ», 1880,
թիւ 11-12, էջ 170-1. Գ. Զմշկեան):

Ահա այս պիէսը Մուկւայի համալսարանի հայ ուսանողները որոշում են բեմադրել։ 1858 թ. Յունարի 28-ին, մի մասնաւոր տան մէջ, տեղի է ունենում ներկայացումը։ Բնորոշ է, որ ներկայացմանը ոչ մի կին չի մասնակցում։ Կանանց զերերը կատարում են նոյնպէս ուսանողները։ Այդպէս էր ժամանակի անողոք իրականութիւնը։ Ժամանակաշրջանի հասարակական կենցաղը, սննդի ապահովագութիւնները կանանց թոյլ չեն տալիս բեմարձրանալու։ «Անբարոյական» են համարւում նրանք, որոնք համարձակուում են ոտքը թատրոնական բեմի վրայ։ Սառաջը դնել թատրոնական բեմի վրայ։ Սակայն, չնայած այդ հանգամանքին, պիէսն ուժեղ տպաւորութիւն է զործում հանդիպականների վրայ։ «Հաջի Սուլէյման»—ովկականների վրայ։ «Հաջի Սուլէյման»—ովկականների վրայ։ Այս պիէսը կարգում է 50-ական թաւականներին Մուկւայում կազմակերպւած առաջին հայերէն ներկայացումը։ Այդ տեսակէտից էլ պիէսն արժանի է ուշագրութեան։ Այդտեղ էլ կաթիւը զնալով ստարանում է։ Հարթուում են և նիւթական գդւարութիւնները։ Բայց ահա ուսանողները կանգ են առնում մի հիմնական հարցի առաջ։ Ի՞նչ ներկայացնել։ Թատրոնական ուշպէրտուարը շատ աղքատ էր, եղածները պատմական ողբերգութիւններ էին։ Հարկաւոր էր լրացնել այդ էական բացը։ Եւ ահա թատրոնի զարգացման նսկրւած առաջադէմ երիտասարդաները յօրինում են նոր պիէսներ։ Ա. Վանանդեցին գրում է «Արխառակես» պատմական ողբերգութիւնը, իսկ Նիկողայոս Ալավաթեանը՝ «Վայ իմ կորած 50 ոսկի» կատակերգութիւնը։ Այս պիէսներն ուսանողները կարգում են գրական երեկոներում և քըննադապատում։ Գտնում են, որ «Արխառակէս» — ը շատ անմշակ է։ յանձնում են Փուղիւնեանին, որ մշակի։ Ապա բաժանում են գերերը և առանձին եռանդով առաջ տանում փորձերը։ Կարճ ժամանակում պատրաստում են պիէսները։ Դրանից յետոյ

յանում է վօդը սիլի պատմական նշանաւ կութիւնը:

1859 թ. - ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄԸ

«ԱՐԻՍՏԱԿԵՍ» — Հեղ. Ա. Վանանդեցի. մշակեց
Փուլիսնեան:

«ՎԱՅԻՄ ԿՈՐԱԾ 50 ՌԱԿԻ» — Հեղ. Նիկ.
ԱԼԱԴՎԹԵԱՆԻ:

Հասարակութեան մէջ ցըռմ
ձեռագիր հրաւիրատումները.

ԹԵԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

27-ԻՆ ՑՈՒՆՎԱՐԻ ՏԱՐԻՈՅԵՍ, ԵՐԵՔՇԱԲ-
ԹԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱ-
ՆՈՂՔԸ ՄԵԽԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱԶՆ ՄԻ-
ՔԱՅԵԼ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ ՏԱ-
ՆԸ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԹԵԱՏՐՈՆ ՀԱՅՈՅ ԼԵԶՎԱԻ.
7 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅՑԵԱՆ: ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ Ա-
ՌԱՄԿԱՑՔՆ ԵՆ՝

1. ԱՐԻՍՏՈԿՐԱՆ ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ ԵՂԵ- ՐԵԲԳՈՒԹԻՒՆ

2. ՎԱՅԻՄ ԿՈՐՈՅ ԹԻՍՈՒՆ ՈՍԿԻ
ՄԻԽԱՂԵՎԻ ԽԱՂԲ ՀԱՅՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ
ԿԵԱՆՔԻՑ՝ Պ. ԱԼԱՐԴԱԹԵԱՆՑԻ ԳՈՐԾԸ:

ԹէԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱ-
ՆԱԿ ԵՐԱՔԻՇՏՔ ԿԸ ՀՆՉԵՑՈՒՑԱՆԵՆ ԵՐԵՒԵԼԻ
ԵՐԱԾՇՏԱՅ ԳՈՐԾԵՐԻՑ:

ԱԶԴԻ. — ԱՐԻՍՏԱԿԻՄ ԵՂԵՐԵԳԱԿԱՆ ԽԱ-
ՂԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՄՇԱԿՎԵԼ է Պ. ՓՈՒՂԻ-
ՆԵԱՆՑԻ ԶԵՐԱՄԲԵ:

Յայտարարութեան համաձայն՝ 1859թ.
Յունարի 27-ին, երեկոյեան ժամը 6-ին,
վաճառական Միքայէլ Ստեփանեանցի տա-
նը, որ գտնւում էր Նօվաեայ Բասմաննա-
եայ փողոցում, հաւաքւում են Մոսկւայի
հայ երկան հասարակութեան տարրեր խա-
ւերը, մօտ 200 հոգի։ Դրանց մէջ էին նաև
«Հիւսիսափայլ»-ի խմբագիր 21 տ. Նա-
զարեանը և բանաստեղծ՝ ըննադատ Մի-
քայէլ Նալբանդեանը։ Ոգեւորութիւնն այն-
քան մեծ է լինում, որ նոյնիսկ հիւսնդները
գալիս են թատրոն։

Ուղիղ ժամը 7-ին բացւում է թատրոնի վարագոյրը և հնչում Օրեռ յայտնի երաժշտի «Պօրտիչիու» ողբերգութեան ներածութիւնը։ Այնուհետեւ բեմադրուում է Ս. Վանանդեցու «Արիստակէս» պատմական ողբերգութիւնը, որի նիւթն ընդգրկում է չորրորդ դարի պատմական անցուղաձերը – Արշակ Բ.-ի որդի՝ Պապի կեանքը և ներաէս մեծի մահը։ Գնայած պիէսն իր

բովանդակութեամբ և գեղարւեստական կա-
ռուցւածքով թոյլ գործ էր, բայց հետաքըր-
քիր մի նորութիւն էր լ'ուսկւայի հայ հա-
սարակութեան համար։ Այնտեղ, բեմի վրայ,
հանդիսականները տեսնում են իրենց պատ-
մական կեանքի մի էջը։ Բեմադրութեան
առանձին փայլ են տալիս մէջընդմէջ երգուղ
երգերը։ Աւելի քնորոշ է այն, որ հայերէն
երգեցողութեանը մասնակցում է նաև Զի-
վայիծէ վրացի ուսանողը և զրաւում հա-
սարակութեան ուշադրութիւնը։

Պատական ողբերգութիւնից յետոյ ուսանողները ներկայացնում են ուսանող Նիկողայոս Ալադաթեանի «Վայ իմ կորած յիսուն ոսկի» կատակերգութիւնը։ Դա Թիֆլիսի ժամանակակից կեանքից վերցրած մի կօմէջիա է, ուր հանդէս են գալիս հայ վաճառականի կենդանի տիպերն՝ իրենց ուրոյն կենցաղով, բարքերով և հոգեբանութեամբ։ Ահա թէ ինչո՞ւ այս կատակերգութիւնը գեղարւեստական զւարճութիւն է պատճառում Մոսկւայի հայ գաղութին և դահլիճը դղրդում անվերջ ծափահարութիւններով։ Հասարակութիւնը թատրոնից բաժանւելիս՝ ջերմ շնորհակալութիւն է յայտնում բոլոր դերակատարներին։

Ճաշկերոյք : Ներկայացումից յետոյ հա-
սարակութեան տարբեր խաւերից կազմւած
մի խումբ թատերասէրներ՝ ուսանողներին
հրաւիրում են մի մասնաւոր տան մէջ և
նրանց պատում ընթրիքով : Ընթրիքից
յետոյ կատարում է Առոկւայի հայ թատ-
րոնի տօնակատարութիւնը : Արտասանւում
են ճառեր, երգում երգեր, դրւատում դե-
ռակատարներին : Ներկայ եղող հանդիսա-
կաններն այնքան են ոգեւորւում, որ խոս-
տանում են աւելի լաւ հիմքերի վրայ դնել
թատրոնական գործը : Հասարակութեան
բարձր տրամադրութեան այդ մօմէնտին
ուսանող Ստեփաննոս Ստեփանեանցը (Վեր-
ջը Խորէն եպ. Ստեփանէ) կարդում է հայ
թատրոնին ներկած հետեւեայ ոտանաւորր.

Ժամ ուրախական, օր մեզ ցնծալի,
Այսօր մեր կեանցում բաղդաւոր կը լինի,
Այսօր հայոց ազգ կը զբէ համարժակ,
Այս օրին կը տայ հայ ազգ իւր պսակ:

Խմբնեց, եղբարը իմ,
Խմբնեց թաս կենաց.
Բոկալները լի
Մեր ազգի կենաց:

Այսօր հայոց ազգ հաստ կամուրջ կապեց,
 Այսօր հայոց ազգ թատրոն հաստատեց.
 Այսօր հայոց ազգ լսեց առաջինը,
 Թէ թատրոն կարէ հայ լիզուաւ լինելը:
 Խմբնց, եղբայրը իմ,
 Խմբնց թաս կենաց.
 Բոկալները լի
 Մեր ազգի կենաց:

Մինչ հայր կան ուրեմ կ'լինի և հայ ազգ,
 Երբ հայ կ'մեռնին, թո՞ղ մեռնի և ազգ.
 Մեր հին ազգերից, փառը քեզ իմ Աստված,
 Բոլոր ազգերից բաղդաւոր ենց ծնած:

 Խմբ'նց, եղբարց իմ,
 Խմբ'նց թաս կենաց.
 Բոկալները մի
 Մեր հայոց կենաց.

 Ազգի մէջ թատրոն մեծ բան է, զիտենց,
 Ուրեմն, եղբարց, ուրախանանց մենք.
 Մեր ազգը ստացաւ թատրոն հայ լեզւաւ,
 Մեր ազգ մի՛ մեծ բան, որ չունիր, ստացաւ:

 (Շարութակիիի)

Խսմէնց, եղբարը իմ,
Խսմէնց թաս կենաց.
Բոկալները լի
Թատրոնիս կենաց:
Ուրախանայ՝ ազգ, ուրախանանց մննց,
Որ կան հայոց մէջ արդար ազգասէրը,
Որը իւր օգնութեամք հիմ դրին թատրոնին.
Ոչ հայ-ազգ իւրեանց պարտաւորեցրին,
Խսմէնց, եղբարը եմ,
Խսմէնց թաս կենաց.
Բոկալները լի
Այս տերեանց կենաց,
Այս այս բոլորի մվ է արդ պատճառ.
— Ցնծացէ՛ց, եղբարը, այս փոքր մեր երամ.
Ցնծացէ՛ց, մեր կեսանց նւէր է ազգին,
Ցնծացէ՛ց, հասանց մեր նպատակին:
Խսմէնց, ուրեմն,
Խսմէնց, եղբարը իմ,
Խսմէնց թաս կենաց.
Բոկալները լի
Այս եղբարց կենաց:

ի 27 թունարի
1859 ամի
ՍՏԵՓԱՆՆՈՍ ուսամող
ՍՏԵՓԱՆՆԱՆՑ ԹԷԼԱՒԵցի
ԱՐԱՄ ԵՐԱԾՈՎ

ԲԱԽԱՆՁԱՆՔ

Երազահաս ողորմութեան եմ կարօտ .
Սիրտըս եթէ լեցուն ըսկին մ'ընէիր
Լուռ աղօթքի տաճարին մէջ խնկահոտ ...
Պիտի բղխէ՛ր արցունքի որբ կաթիլով
Ակը հոգւոյս որուն ահա փշրեցի
Բիւրեղ սափորն ուր կար երկինք մը գինով :
Դարձընէի՛ր աղաւնետունն ամայի
Ճերմակ երամը յոյսերուս ցիրուցան,
Դուն որ հովին զիտես ծաղիկը վայրի ...
Մեղուներն ալ իմ տենչանքիս արեւին
Օր մը լուսե՞ղ այս փեթակէն մեկնեցան
Երբ գեռ կանանչ էր ջուրերու հայելին ...
Աշունին հետ ես եկե՛ր եմ ոսքիդ մօտ .
Սիրտըս ահա՝ լեցուն ըսկին մ'արիւնի .
Երազահաս ողորմութեան եմ կարօտ ...
Մատներուս ծայրը կակաչն է հողերուն
Մատներուս ծայրը ոսկին է ցորենի .
Ու ձայնիս մէջ կայ հովին սիրտը թրթուուն
Որ արտմաւէտ արշալոյսով կ'արիւնի ...

ԱՐԵՎԻՆ ԵՐԿԱՔ